

ԱՆՑՈՐԴԻ ՏՊԱՀՈՐԾԻԹԻՒՆԵՐ ԳԱՆՉԱԿ ՔԱՂԱՔԻՑ

Ս Տ. Տ է Ր Ե Ա Ն Ի

Երկաթուղով Բագւից Թիֆլիս անցնելիս, հետաքրքրւեցի տեսնելու ճանապարհի վրայ ընկած՝ Կովկասի լաւտնի քաղաքներից մէկը, իւր գիւռով և մասնաւորապէս դպրոցական կոփէներով լաւտնի Վանձակը՝ Գնացքից իշաւ և կառք նստելով մնձ հետաքրքրութեամբ դիմեցի քաղաքը, Նահանգական քաղաք էի մտնում, սպասում էի բնական և արհեստական, հարուստ և գեղեցիկ տպաւորութիւնների. Բայց կարծես վիճակւած էր հէնց սկզբից հիասթափել. Շրջապատող տեսարանների մէջ գեղեցիկ էին միայն ազգիները և Գանձակի լաւտնի շինարիները. Ես անցաւ մի շարք գիւղական մների մօտով և դեռ հետաքրքրութեամբ սպասում էի, թէ երբ պիտի հասնենք քաղաքի կենդրոնը, որ քաղաքի չնորհք ունենաւ. զանկարծ կառապանս կանգ առաւ խանութիւներով շրջապատած մի հրապարակում և հարցրեց «ուր կը հրամանէք». Ճախ, առացի, և շարունակեցի գիտել ու հիասթափել. ամբողջ շրջապատս ինձ ասում էր, որ ես գտնուում եմ մի կատարեալ ասիական քաղաքում.

Ինձ հարկաւոր էր հաւոց ծխական տղաւոց դպրոցը գտնել. բայց ես չէի ճանաչում. կառապանս էլ դժւարացել էր, ինչպէս երկում էր, մի քանի տարի միայն կառապանութիւն անելով ալրպիսի մի հիմնարկութիւն ճանաչել փոքրիկ քաղաքում: Դորան Բ'նչ ասել երբ շատ հակեր իմ հարցին, թէ ուր է հաւոց ուսումնարանը, «չըգիտենք» էին պատասխանում: Վերջապէս գտաւ ընկերոջս և տեղաւորւեցի:

Քաղաքին ծանօթանալու համար ի հարկէ բաւական չէին արտաքին տպաւորութիւնները, որ գիւղի էին վակել. հարկաւոր էր տեսնել և դպրոց, եկեղեցի, ընթերցարան-գրադարան, թատրոն և ազն, որոնցով կարելի լինէր փոքր և շատէ զաղափար կազմել. թէ որշափով աղ հասարակութիւնը ապրում է հասարակական խնդիրներով և թէ օգտակա հիմնարկութիւնների գիտակցութիւնը որչափ զարգացած է աղ հասարակութեան մէջ:

Նս սկսեցի գպրոցից, Գանձակում կաէ հալոց ծխական չորս դպրոց, միղասեան երկսեռ ու երկդասեան երկսեռ և աղջ բոլորում մօտ 500 սան և սանուհի և 17 ուսուցիչ վարժուհի, Յաւօք սրտի տխուր բառերով պիտի նկարագրեմ այդ գպրոցի գրութիւնը. միսիթարական բառ չի կարող տեղ բռնել նկարագրութեանս մէջ: Ով ուզում է ժողովրդի անտարբերութեան և «եօլա տանելու» սովորութեան մասին գաղափար կազմել թող մտնի ապդ գպրոցները և դիտի: Գնանք միղասեան գպրոցները, որոնց շնութիւնը դեռ համեմատաբար լաւ է երկդասեաններից. Փողոցից բացում ենք դուռը և մտնում մի փոքրիկ, նեղ անցք, որը նախասենեակ է համարում. դա թէ նախասենեակ է վերարկուների, կրկնակօշիկների, ձեռնաֆալտների, հովանոցների համար և թէ ուսուցչանոց է զասատուների համար, որտեղ եթէ 3—4 աթոռ զնւեն, մարդիկ պարտաւոր պիտի լինեն նստելու, ապա թէ ոչ տեղ չի լինի, թէ իրանց, թէ աթոռներին, Ուսումնաբանի բակը մի նեղ փոքրիկ տեղ է, անկիւններն էլ բռնւած ալլով և զանազան տակառներով և ալյատեղ պիտի խաղան դասերից լոգնած մանուկները: Դասատները աշակերտների թվի համեմատ շատ փոքր են, Դա օրիորդաց գպրոցն էր: Տղանց միղասեաննը համեմատաբար աւելի քիչ անդարմարութիւններ ունի. միան սաստիկ զգալի է լուսու պակասութիւնը:

Իշնենք ներքե, տեսնենք երկդասեանները, Անշուշտ կը տրամադըրուէիք աւելի լաւ լարմարութիւններ աեսնել, ընթերցող, բաց գուրու Մտնենք օրիորդաց գպրոցը: Դա երկարկանի շնութիւն է. գպրոցը տեղաւորւած է վերի լարկում, բացի ա. բաժանմունքից, անցնելիս հետաքրքրութեամբ նաևցի մի սենեակի ներսը. սենեակի տեսքը ինձ կարծել տեսց, թէ աղտեղ հիւսն է բանում և կամ ծառաւի բնականան է. բաց ինձ ասացին, որ ուսուցչանոցն է: Շարունակեցինք դասատները ման գալ, մի ընդհանուր, աչքի ընկնող պակասութիւն, որ զարմացնում էր մարդու, այդ լուսու սարապիկներ քչութիւնը, նստարանների անդարմարութիւնը և տեղի նեղած քութիւնն էր: Ալյատեղց պ, աւագ ուսուցիչը ինձ առաջնորդեց գէպի ներքեն լարկը, մի փոս և մուժ նախասենեակ մտանք, ևս կարծում էի, թէ զնում ենք ցախատունը կամ ջրաւունը նաևելու, բաց որքան եղաւ իմ զարմանքը, երբ ինձ ասաց, թէ ա. բաժանմունքը տեսնենք. և այդ ասելով բաց արեց դիմացի դուռը. ես ապշած մնացի, ալյափիսի մի խալտառակ սենեակում նստարաններ շարւած տեսնելով տեսնողի առաջին խօսքը կը լինի, թէ դա լաւ գինեստոն կը լինի: Դասատնը ծալը ի ծագ շարւած էին երկու կարգ նստարաններ, որոնց միջով մի մարդ հազիւ հազ կարող է անցնել: Ուսուցչական սեղանը մի կերպ տեղաւորեցրել էին մի անկիւնում, իսկ միւս անկիւնը, համարեա թէ մինչև պատը սեղանների միւս շարքի շարունակութիւնն էր բռնած. և ինչ էր այդ սենեակի

բարձրութիւնը. մէկ ու կէս սամէն չէր լինիլ. իսկ աշակերտների թիւն
60 է. դեռ առաջ եղել է աւելի շատ. կարելի է ուրեմն երեսակալի թիւն
որքան տարածութիւն կը նկնէր ամեն մի աշակերտի և որքան էլ ապա
կանւած կը լինի այդ օդը. Այդ բոլոր պալմաններում զեռ ևս լուսամուտ
ներն էլ փոքրիկ են և ցանցապատ. Ահա թէ բնութեան գրկից խւած կալ
տառ մանուկը ինչպիսի անդուրեկան և աճդրաւիչ պալմանում պիտի ուս-
ման հետ կապվ. իսկ ովկ կարող է ուրանալ այդ տեսակ վատ կամ լաւ
պալմանների աղղեցութիւնը մանաւանդ նորեկ մանկան համար, թէկուզ
ուսուցիչը լինի շատ էլ լւա մանկավարժ. Զարմացմամբ իմացաէ, որ այդ
շնութեանը տալիս են 800 ո., վարձ և մի մասը ուրիշին են վարձով
տւել 150 ո.: Իսկ ազգպիսի մի շինութիւն, թերևս աւելի լարմարը, Գան-
ձակի նման տեղում կարելի է առանց խաթթապահութեան առ առաւելն
500-ով վարձել. Այս, ընդհանրապէս զարմանալի է մեր հոգաբարձուների
տնտեսավարութիւնը. երբ խնդիրը ուսուցիչների ուսմիկներին է գալիս
գիտեն սակարգութիւն անել ուսումնարանի շահի անունով, իսկ երբ բանն
ընկնում է այն մարդոց հետ, որոնք կախումն չունին և շատ անդամ
իրանք սպասելիք ունեն, այն ժամանակ երկու խաթթներ և երկու շահեր
մրցման են հանդիպում և ի հարկէ դժբաղսաբար ուսումնարանին է
պարտուղը լինում ըստ մեծի մասին:

Բայց զեռ այդ էլ թողնենք և գեանք մի աւելի խալտառակ շինու-
թիւն: Դաս ս. Յովհաննու եկեղեցւոյ տղանց երկդասեան դպրոցն է. դրա-
բոցը պիտի գնալ թէք մակերեւովթով. Բոլոր տիտոր տպաւորութիւն-
ները աւտոեղ վերջնական, փառաւոր կնիքն են ստանում: Դեռ հէնց ար-
տաքուստ խկոնց աչքի են ընկնում կիսաքանդ լուսամուտները, որոնք
դրաի կողմից մի թիզ հազիւ բարձր լինեն գեանից և տեղացող անձերը
միշտ կարող է իւր գործը կատարել. Ներս իշնենք. Մարդու թւումէ թէ
բանտ է մանում. նախ մտնում ենք մի խոնաւ, երկար ու նեղ միջանց,
որտեղ խկոնց աչքի է ընկնում քաղաքակրթութեան մի նշանը՝ ասիա-
կանացրած եւրոպականութիւնը, այն է պատին մի նեղ փատիլ վրաէ
ամրացրած չորս-հինգ վերշոկանոց մեխերը վերաբկուներ կախելու հա-
մար, (այս որտեղ պէտք է խնայել, փող տնտեսել): Շարունակենք.
ոչ մի սենեկակ չեմ կարող տանել քեզ ընթերցող, որ միսիթարական
տպաւորութիւն ստանաւ. Բոլոր սենեկակները մի երկարութեամբ են
ձգւած՝ արևելքից արևմուտ. բոլոր դասարանների բոլոր լուսամուտները
հիւսիսապին պատի վրաէ են և երեակացեցէք այդ պատին զուգմանուական
հազիւ $\frac{1}{2}$ արշին հեռաւորութեամբ ձգւում է պարտիզի պատը, որը իւր
բարձրութեամբ բռնում է լուսամուտների առաջը կէսից աւելի, իսկ այդ
լուսարգելի շարունակութիւնը կազմում են զւարթ և տերեախիտ ընկու-
զենիները և շինարիները, Այդ անէարմարութիւնների վրաէ աւելացրէք և

լուսամուտների անդարմարութիւնը իրանց նեղ ցանցերով և արեի հակառակ կողմով անցնելը, և երևակածեցէք, թէ որքան խղճալի լուսաւորութիւն կը լինի այդտեղ. Մարդ չի կարողանում հասկանալ, թէ ինչքո են կարողանում կարդալ այդ մթութեան մէջ. Ազդ բոտէին, երբ ամառավին պահծառ արեն էր փակում, դժւար էր կարդալը, ինչպէս են անում ձմեռաւակ մառախլապատ օրերին. գալիք կամ կատեի աչքեր են հարկաւոր, որ մթնում լուս տան. Խակ սենեակների պատերը, լատակը, սեղանները, գրատակտակը. Աստւած հեռու տանի, այդ սեղաններից մի մասի վրա երեի Նովի որդիքն էլ նստած սովորած կը լինեն. Հետաքրքիր է ինչպէս են դրում ուսուցիչները ցածիկ գրատախտակների վրայ, նստած, թէ չոքած, Պատերի համար բաւական է այն Փակտը, որ մի դասի ժամանակ լանկարծ փլում է մեծ սենեակի պատի մի մասը, սարսափ ազդելով ի հարկէ խեղճ մանուկների վրայ, որոնք դաս, բան թողնելով՝ գունատւած դուրս են թռչում.

Դասարաններից անցանք ուսուցչանոց, որտեղ դրած էր և գրադարան-պահարանը, Գրքերի համարները և կանոնաւոր դասաւորութիւնը ցուց էին տալիս, որ անհոգութեան չէ մատնւած. Խակ գործ աղրութեան մասին ոչինչ չեմ կարող ասել. Խմացակ միան, որ աշակերտներին գրքեր տրում են եղել: Զմոռանամ լիչել որ աչդտեղ միան տեսակ գրագրան, Բայց մի մեծ թերութիւն, որ աչքի էր ընկնում ացդտեղ, այն էր, որ գրքերի մանկական բաժինը շատ աղքատ էր. աչդ բաժինը չէր կազմում առանց այն էլ խեղճուկ գրադարանի նոյն խակ ^{1/}, մասը, այն ինչ մեր ծխ. գպրոցներում, որտեղ հարուստ գրադարան չենք կարող ունենալ, առաջին և գլխաւոր հօգութ վիճի մանկական բաժինը:

Ուսուցչանոցում աչքիս ընկաւ պատին կպցրած մի ցուցակ. դա դպրոցում ստացւող պարբերական հրատարակութիւնների ցանկն էր. Ստացւում են թէ Կովկասի բոլոր հայ հրատարակութիւնները և թէ Կովկասի ու մալրաքաղաքների ոռւս հրատարակութիւնների մի մասը, ինչպէս օրինակ՝ Ռուսկայ Մասլ, Ռուսկայ Յատկա, Ռուսկայ Վետհայտ, Ռուսկայ Շկոլա, Ռուսկայ Վեճոմոստի, Մոսկովսկայ Վեճոմոստի, Կավկազ և այն. Ես բոլորովին զարմացած մնացի, աջ կողմումն տեսնելով մի ողորմելի մանկական գրադարան, ձախումն պարբերական հրատարակութիւնների մի հարուստ ցուցակ. Այս ինչ է, զարմացմամբ հարցը ես. Լաւ չըր լինիւ որ անքան պարբերական հրատարակութիւններից մի մասի տեղ կարեոր գրքեր առնէին և գրադարանը հարստացնէին. և միթէ չէին կարող մի մասն էլ իրանք ստանալ, կամ կարդալ ցացկացողները չըն կարող օգտաել հասարակաց գրադարան-ընթերցարանից. Խոճ պատասխանեցին, որ գրադարանը թերցարան չկայ, խակ աչդ հրատարակութիւնները բերել են տրւել լատուկ աչդ նպատակով տրւած ներկալացման արդիւնքով. Այս բացադրու-

թիւնը և համակրանք և կարեկցութիւն զարթեցրեց իմ մէջ, խորդ գաւառական ուսուցիչներ, գեռ ևս դոքա նահանգական քաղաք են ընկել և զարձեալ ինչ կերպով են միան կարողանում լագեցնել իրանց հետաքրքրութիւնը և չկտրւել արտաքին աշխարհից: Միթէ դա ամօթ և նախատինք չէ Գանձակին, նահանգական քաղաք է և զեռ մինչև այսօր չունի իւր հասարակաց գրադարան-ընթերցարանը, Բայց թողնենք այդ հարցի մասին լետու խօսելու. վերջացնենք մեր խօսքը դպրոցի մասին: Յամենան դէպս մենք կարծում ենք, ապդքան թերթերից 2—3 խօկարելի էր զոհել օգուտ զրբերի:

իմ բոլոր հարցերին, թէ հապա ինչ է անում հոգաբարձութիւնը, ինչու չէ մտածում դպրոցի բարուքիման մասին կամ ինչու ծնողները հարց չեն բարձրացնում, միշտ լինում էր պատասխան՝ «Է՞ս հոգաբարձուները կամ ծնողները միի ուստամարանի շէմքը ճանաչում են, նոյս թողնէք զբաղէին իրանց կուռակցական կոխիներով», Պատիւ գանձակեցիներին. բանտերը աւելի չարմարութիւններ ունին չանցապարտ հասակաւորների համար, քան թէ այդ դպրոցը ունի անմեղ մանուկների համար. Ալտեղի ինձ թւում էր, թէ գիւղական մի դպրոցումն եմ գտնում, բաց երբ միան դուրս եկաէ և փողոցում տեսաէ կառքերը սլանալիս ու միակ աչքի ընկնող բարձր շինութեան ճակատին էլ կարդացի „Գյուբերհու սպավենէ“, ստիպւեցաէ լիշելու, որ ոչ ես գտնում եմ իրօք մի նահանգական քաղաքում:

Տղակոց երկդաւեմն դպրոցում աչքիս ընկաւ և մի մեծ անգարձարութիւն. մի սեննակում տեղաւորւած տեսալ 7—8 նստարան երկու շարքով. ինձ ասացին աջ թեր չորրորդ բաժանմունք է, ձախ թեր հինգերորդ. Ես բոլորովին զարմացաւ ԿՎ և Վ բաժանմունքները միացեալ տեսնելով. մեզ մօտ կան Ա և Ա, Ա և Ա միացեալներ. բայց ԿՎ և Վ միացեալներ մենք գոնէ զգիտենք թէ ուրիշ որտեղ կաէ. Եւ շատ հետաքրքրական է այդ դասարանների լառաջաղիմութիւնը: Կթէ մենք անում ենք այդ փոքր բաժանմունքների հետ, այդ միան ակամաց և անճարացած, որովհետեւ զարանով լառաջաղիմութիւնը ուղղակի կիսում է. և բացի զորանից ոտոր բաժանմունքներուն փոքր է շատէ հնարաւորութիւն կաչ այդ անելու, որովհետեւ աշնտեղ դեռ ես գրաւոր պարապմունքների կարիք շատ կաչ և կարելի է լինում ժամերի պարապմունքը կիսել բանաւորի և գրաւորի. բայց բարձր բաժանմունքներում, որտեղ աւելի շատ գիտութիւն կաչ և ըստ մեծի մասին բանաւոր են անցնում, մենք չենք հասկանում ինչպէս են սպառւում կէս կէս ժամերը: Պր. աւագ-ուսուցչի բացատրութիւնից երեաց, որ այդ միան այս տարի է այդպէս արւած՝ առաջին անգամ Վ բաժ. բաց անելը լաջողեցնելու համար և պէտք է աշխատեն դալ տարի այդ անգարձարութիւնը վերացնել: Արդեօք այդ անբարձարութիւնը կը մերանամ: Առ

կախուած կը լինի նորընտիր հոգաբարձութիւնից, որն իսկապէս շատ բան ո՞նի անելու, եթէ չի ուզենալ ներկայի անտարբերութեան և անփութութեան շարունակութիւնը կազմել¹⁾։

Հարց ու փորձից իմացած որ ս. Յովհաննու եկեղեցին (օրի գաւթումն է տղ, երկդասեան դպրոցը) մօս 27,000 ռ. փող ո՞նի, ինչի համար է պահում եկեղեցին այդ փողը և տարէցտարի շատացնում, քանի որ դպրոցի շինութիւնը ազդպէս խալտառակ է և նոյն իսկ ինքը եկեղեցին անշուք, Բաց ուսումնարանի լնդարձակ բագում կարելի է 10—15 հազար ուռերլով մի շատ չարմար և մեծ շինութիւն շինել երկու բաժինով, թէ օրիորդաց և թէ տղաջոց. և այն ժամանակ օրիորդաց դպրոցի տարեկան ծախքից էլ կը պակասի 800 ռ. շուալ վարձը իսկ 10—15 հազար ուռերլի դժւար չէ գուացնել եկեղեցուց և ժողովրդից հանգանակութիւնով Հարկաւոր է միան գործի գլուխ անցնող և հետաքրքրուող Զենք հասկանում ինչ է անում հոգաբարձութիւնը¹⁾։ և ինչ հավեցք ունի իւր պաշտօնի վրայ, դա մի պատւաւոր տիտղոս է համարում, որի կրելը պարձանք է, թէ մի որոշ պարտաւորութիւն, որը պահանջում է հռանդ և հետաքրքրութիւն: Ցաւելով պէտք է ասենք, որ Գանձակում ամեն բան փչացնում են կուսակցական կուները և լարւած լարաբերութիւնները, որանցից, ինչպէս երևում է, գանձակեցիք ոչ մի կերպ մտափր չեն ձեռք վերցնել Բաւական է, որ մի գործ, լինի դա օգտաէտ, ձեռնարկած լինի մի որ և է կուսակցութիւն, հակառակ կուսակցութիւնը ոչ միան անմասն կը մնայ այլ կաշխատի վնասել:

Ցաւելով պէտք է ասենք, որ կուսակցութիւնը արմատացած է ոչ թէ միան ժողովրդի և հոգաբարձութեան, այլ և ուսուցիչների մէջ և աւելի խիստ կերպով, քան որ և է ուրիշ տեղի և աւելի ցաւալին և տգեղն այն է, որ այդ պատճառ է դառել երբեմն ուսուցիչների կողմից հակամանիւարժական քաղերի և կուսակցական ոգին արտացոլել է նաև աշակերտաների և մանաւանդ աշակերտունների մէջ։ Աշակերտունները որոշ կերպով բաժանւած են այս ինչ ուսուցչական և այն ինչ ուսուցչական, և մինչեւ անգամ այդ հակառակ կուսակցութիւնները դասաւանը կուտամ են, երբ մէկը կամ միւսը թողը է տալիս իրանց հակառակ կուսակցութեան ուսուցիչ հասցէին մի բան. և մինչեւ անգամ աշակերտները կամ աշակերտունները թողը են տալիս կոպիտ պասասիսան «ոչ իրանց ուսուցչին», և այդ ներւում է, Մենք երկու ընտանիքում պատահեցինք և տեսանք, թէ ինչպէս ծնողները կամ մեծ եղագրը, քուրերը աշակերտի կամ աշակերտունը ներկայութեամբ խօսում են զանազան բաներ այս կամ այն ու-

¹⁾ Ողթակցութիւնս գրւած է հոգաբարձական նոր ընտրութիւնից առաջ.

սուցչի հասցէին և հիացմամբ պատմում են ա. բաժանմունքի աշակերտի սրախօսութիւնը նոյն հասցէին, Ազդ ոչ մի մանկավարժութեան մէջ ընդունած չէ, պարոններ, ուսուցիչը դասատանը քարոզում է ծնողասիրութիւն, լարգանք դէպի ընտանիքի անդամները, իսկ դուք տանը նոյն ալդ ուսուցիչների վարկն էք ձգում երեխափ աչքում. Ինչ ազդեցութիւն կարող է ունենալ ալ ևս ալդ ուսուցիչը աշակերտի վրայ, երբ նա շատ անգամ ծաղրել է նոյն աշակերտի ներկայութեամբ. մօտեցէք, պարոններ, դպրոցի շիմքին, ասելիք ունեք, խորհրդակցեցք ուսուցիչների հետ. կարգացէք և տեսէք թէ ինչ է մանկավարժութեան պահանջը և կը համոզէք, որ ձեր արածը սիսալ է. ընտանիքի ծնողը և դպրոցի ուսուցիչը պէտք է համերաշխ լինեն, եթէ նոքա ցանկանում են դաստիարակութեան գործում թեան գործը առաջ տանել, նոքա պէտք է դաստիարակութեան գործում ձեռք ձեռքի տաճ առաջ գնան, միշտ խորհրդակցեն միմեանց հետ, մէկի դիտողութիւնից միւար օգտվի, մէկի փորձը միւար համար խրատ և հիմք լինի. ալ կերպ մէկի շինածը միւար կը քանդի և ուրիշ ոչինչ. Մենք միտք չունենք անպայման կերպով արդարացնելու ուսուցիչներին, մենք համաձայն ենք, որ ուսուցիչների կողմից էլ կարող են լինել շատ սիսալ և նոյն համար անսներելի քայլեր և մենք խմացնաք մն քանի իրողութիւններ, որոնք իսկ անսներելի քայլեր և մենք խմացնաք մն քանի իրողութիւնների և ոչ էլ պահանձարացի տեղիք կը տափն այդպասի խօսակցութիւնների և ոչ էլ պահանձում թէ պարոցում կատարւածները չհետաքրքրեն կամ չզբաղեցնեն ծնողներին. ոչ, մենք չենք պահանջում անտարբերութիւն դէպի դպրոցը և ուսուցիչները. Ընդհակառակը կարելի է և հարկաւոր է խօսել բաց ոչ երեխափ ներկայութեամբ. Անմեղ երեխան պէտք է ճանաչի ծնողին և ուսուցչին և նոցա հեղին ակութիւնը, ու էրը և չարգանքը և պէտք է գիտենաք սովորելու և կրթելու կարեսորութիւնը, ուրիշ ոչինչ. իսկ դուք ծնողներդ, եթէ հետաքրքրուում եք (և պէտք է հետաքրքրէք), ամելի մօտիկ ծանօթացէք ուսումնարանի ամբողջ դրութեան հետ, ձեզ համար լուրջ հոգս ու զբաղմունք շինեցէք, հետաքրքրեցէք ինչպէս հարկն է, ցաւին ճար անելու համար և ոչ թէ լոկ խօսակցութեան նիւթքաղելու համար Արէք ազդ, և կը տեսնէք, որ շատ գործ կատ առաջներիդ, եթէ դուք բարեխիդ ծնողներ էք.

Գանձակում չկատ և գրադարան ընթերցարան. Ազդ միթէ վակել է Գանձակին, Ախալքալաքի նման փոքրիկ քաղաքը, Ագուլսի նման աւանը գրադարան ունենալուց էտոսէ¹⁾ ամօթ չէ Գանձակին չունենալ.

¹⁾ Ագուլսինը, որ քառորդ դար գոլութիւն ունէր, որպէս ստոգտ տեղեկացած ենք, անցեալ 1893 թւականին փակւեց, ոչ հասարակութեան ցանկավութեամբ ալ նահանգական իշխանութեան կարգադրութեամբ:

Նոր իսկ ալդ նահանգի փոքրիկ գիւղը Մեղրին ունի, իսկ ինքը Գանձակը չունի. շատ տիսուր և անհամանձելի դրութիւն է. Յւ միթէ կարծում էք, թէ դժւար է ունենալը. ոչ ամենեին, միայն անտարբերութիւնն է, որ թմրեցրել և ըստ երևութիւն դժւարացրել է ամեն բան, նթէ ուսուցիչները ներկալացում են տալիս և դպրոցի անունով բերել տալիս ամբողջ 10—12 թերթ, միթէ նոյն ուսուցիչները ուրախութեամբ ներկալացում չէին տալ օգուտ հասարակաց գրադարան-ընթերցարանի. կամ նոյն իսկ ալդ թերթերի մի մասը չէին լատկացնիլ ընթերցարանին օգուտ ընդհանուրի Միթէ Գանձակում անհնար է մի փոքրիկ գումար ժողովել գործ սկսելու համար. մենք կարծում ենք որ անհնար չէ. կարելի է ալդ և ուրիշ շատ բաներ. միայն նախաձեռնող է հարկաւոր. հարկաւոր է մի կողմ դնել անտարբերութիւնը և թմրութիւնից զարթնելու.

Գանձակին աւելի ևս հարկաւոր է գրադարան-ընթերցարանը ոչ մի ան ընթերցանութեան ալ և մարդկանց հետ շիւելու տեսակէտից: Ազդեղ տները միմեանցից բաւական հեռու հեռու են ընկած. դրա համար մարդկանց հաղորդակցութիւնը, հետևաբար և շփումը շատ քիչ է. չկայ մի կենտրոնատեղի կամ ժողովատեղի, որտեղ կարելի լինի մարդկանց պատահել շփել: Նւ մի փոքր մասով էլ մենք դորան ենք վերադրում Գանձակում հասարակական խնդիրների կազմիլը: Գուցէ մեզ առարկողները լինեն, թէ կաէ կլուք, որտեղ հաւաքւում են մարդիկ և կարող են տեսնել միմեանց հետ. բաց խոստվանւեցէք, որ մեզ մօտ առհասարակ կլուբների հասարակութիւնները մի որոշ տեսակի են և կլուբներում էլ թղթախաղը աւելի է հետաքրքրում մարդկանց, քան որ է ուրիշ բան. բացի գորանից կլուբները ամեն մահկանացւի էլ մատչելի չեն: Գրադարանը մասամբ կըստեղծի ալդ լարմարութիւնները, որ շատ ցանկալի և անհրաժեշտ են:

Առիթ ունեցանք խօսելու մի քանի ուսանողների հետ, որոնք զգալ ալդ թերութիւնը ցանկութիւն էին լաւաճում գրադարանի գործը սկսել: Ի սրտէ ցանկանում ենք լաջողութիւն և ժողովրդի կողմից աջակցութիւն: Թող սկսել գործը, թէկուզ շատ փոքր կերպարանքով, վնաս չունի, ժամանակի ընթացքում կը մեծանալ և կը կանոնաւորւի: